Յունիս 21, 22, 23 — ընտրութիւններ Հայաստանի բոլոր վայրերում։

Խորհրդարանի ընտրութիւնների համար ներկայացուց թեկնածուների հետեւեալ ցուցակ.

№ 1. Հ. Յ. Դաշնակցութիւն . . . . 120 թեկնածու
№ 2. Հայ Ժողովրդական կուս. . . . 65 ,,
№ 3. Սոց.–Յեղափոխ. կուս. . . . . 35 ,,
№ 4. Քրդական ցանկ . . . . . 2 ,,
№ 5. Ասորական ցանկ . . . . . 3 ,,
№ 6. Անկուսակց. Գիւղաց. Միութիւն . . . . .
№ 7. Թրքական ցանկ . . . . . .

Նախընտրական պայքարն արդէն սկսուած էր, երբ Թիֆլիսցիների և երևանցիների միջև ծագած կուսակցական ներքին անհամաձայնութիւնների հետևանքով՝ Ժողովրդական Կուսակցութիւնը, թեկնածուների ցանկը ներկայացնելուց և ընտրական աշխատանքներին ձեռնարկելուց յետոյ, սնոտի պատրւակներով, հրաժարւեց մասնակցելուց, յունիս 20–ին յետ պահանջեց իր ցուցակը և սկսեց պայքար մղել խորհրդարանական ընտրութիւնների դէմ։ Այդ պայքարում նա յենւում էր, գլխաւորապէս, Պօղոս Նուպարի բռնած բացասական դիրքի վրա։ Պօղոս Նուպարը դժգոհ էր, որ Հայաստանում խորհրդարանական ընտրութիւններ էին կատարւում. Հայաստանը նրա աչքին մի գաւառ էր սոսկ, ուր կարող էր գոյութիւն ունենալ տեղական իշխանութիւն և ոչ թէ խորհրդարան։

Նախընտրական պայքարը եղաւ բուռական տաք. ժողովներ, թռուցիկներ, ընտրական ցուցատախտակներ, կոչեր, անհաշիւ յօդուածներ թերթերում։ Կուսակցական գործիչները պատում էին գիւղից գիւղ ու քաղաքից քաղաք և աշխատում ժողովրդականացնել իրենց թեկնածուների ցանկը — ճիշտ և ճիշտ Եւրոպայի օրինակով։

Ամենից լայն ժողովրդականութիւն վայելողը, բնականաբար, Հ. Յ. Դաշնակցութեան ցանկն էր և նրա նշանախօսքերը. Հ. Յ. Դաշնակցութիւնը պահանջում էր «Միացեալ և Անկախ Հայաստան», «Ամբողջ իշխանութիւնը աշխատաւոր ժողովրդին», «Հողը աշխատաւորին», «Գործ՝ գործազուրկին», «Հաց ժողովրդին», «Ժողովուրդների համերաշխութիւն և եղբայրութիւն»։

Ընտրութիւնները տեղի ունեցան նշանակւած ժամանակին և արդիւնքը եղաւ.

Հ. Յ. Դաշնակցութիւնը ստացաւ	230,272 քւէ	—	72 պատգամաւոր
Սոց.–յեղափոխականները՝	13,239 քւէ	—	4 ,,
Թուրքերը՝	8,187 քւէ	—	3 ,,
Անկուսակց. Գիւղաց. Միութիւնը՝	4,224 քւէ	—	1 ,,
Քրդական ցուցակը՝	1,305 քւէ	—	ո՛չ մէկ
Ժողովրդականները՝	481 քւէ	—	ո՛չ մէկ
Ասորիները՝	178 քւէ	—	ո՛չ մէկ